Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն

Վերագտնել Սուրբ Ծննդյան Հոգին

Տարիներ առաջ, որպես երիտասարդ երեց, ես կանչվել էի այլ երեցների հետ միասին Սոլթ Լեյք Սիթիի հիվանդանոց՝ հիվանդ երեխաներին օրհնություն տալու համար: Երբ ներս էինք մտնում, մենք նկատեցինք վառ լույսերով մի հաճելի տոնածառ և տեսանք դրա տակ դրված զգուշությամբ փաթաթված կապոցներ: Այնուհետև մենք անցանք միջանցքներով, որտեղ փոքրիկ տղաներն ու աղջիկները՝ ոմանց ձեռքը կամ ոտքը գիպսի մեջ դրված, ուրիշները վատառողջ վիճակում, որ, հավանաբար, դեռ երկար պետք է բուժվեին, ողջունեցին մեզ ժպտացող դեմքերով:

Մի դեռատի, շատ հիվանդ փոքրիկ տղա ձայն տվեց ինձ. «Ի՞նչ է Ձեր անունը»:

Ես ասացի նրան իմ անունը, և նա հարցնեց. «Դուք ինձ օրհնություն կտա՞ք»:

Օրհնությունը տրվեց, և երբ մենք շրջվեցինք, որ հեռանայինք նրա անկողնու մոտից, նա ասաց. «Շատ շնորհակալություն»:

Մենք մի քանի քայլ արեցինք, հետո ես լսեցի նրան կանչելիս. «Օ՜հ, Եղբայր Մոնսոն, շնորհավոր ձեր Սուրբ Ծնունդը»: Այնուհետև մի մեծ ժպիտ փայլեց նրա դեմքով մեկ:

Այդ տղան ուներ Սուրբ Ծննդյան հոգին: Սուրբ Ծննդյան հոգին մի բան է, որը ես հուսով եմ, որ բոլորս էլ կունենանք մեր սրտերում և կյանքում, ոչ միայն այս ժամանակաշրջանում, այլ ամբողջ տարվա ընթացքում:

Երբ մենք ունենք Սուրբ Ծննդյան հոգին, մենք հիշում ենք Նրան, ում ծնունդը մենք նշում ենք տարվա այս եղանակին. «Թէ այսօր ձեզ Փրկիչ ծնուեցաւ Դաւիթի քաղաքումը. որ է Քրիստոս Տէրը» (Ղուկաս Բ.11):

Մեր օրերում նվերներ տալու հոգին մեծ դեր է խաղում Սուրբ Ծնունդը նշելու ժամանակ: Մտածում եմ, որ մենք կարող ենք օգուտ քաղել, եթե հարցնենք ինքներս մեզ, թե ի՞նչ նվեր Տերը կցանկանար, որ *ես* տայի Նրան կամ ուրիշներին տարվա այս թանկագին ժամանակ:

Կարող եմ ես առաջարկել, որ մեր Երկնային Հայրը կցանկանար, որ մեզանից յուրաքանչյուրը տար Իրեն և Իր Որդուն հնազանդության նվերը: Ես նաև զգում եմ, որ Նա կխնդրեր մեզ նվիրաբերել մեր անձը և չլինել եսասեր կամ ագահ կամ անհաշտ, ինչպես Նրա թանկագին Որդին է խորհուրդ տալիս Մորմոնի Գրքում.

«Քանզի ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, նա, ով ունի հակառակության հոգին, ինձանից չէ, այլ դևից է, որը հակառակության հայրն է, և նա դրդում է մարդկանց սրտերը՝ բարկությամբ վիճելու մեկը մյուսի հետ:

Ահա, սա իմ վարդապետությունը չէ՝ բարկության

դրդել մարդկանց սրտերը մեկմեկու դեմ. այլ այս է իմ վարդապետությունը, որ այդպիսի բաները պիտի վերացվեն» (3 Նեփի 11.29–30):

Ժամանակների լրության այս հրաշալի տնտեսության մեջ սիրելու և մեզանից բաժին հանելու հնարավորություններն իսկապես անսահման են, սակայն դրանք նաև անցողիկ են: Այսօր կան սրտեր, որ պետք է ուրախնան, բարի խոսքեր, որ պետք է ասվեն, գործեր, որ պետք է արվեն, և հոգիներ, որ պետք է փրկվեն:

Մեկը, ով ուներ խանդավառ մտքեր Սուրբ Ծննդյան հոգու հետ կապված, գրել է.

Ես Սուրբ Ծննդյան Հոգին եմ:
Ես մտնում եմ աղքատ տուն, պատճառ դառնալով, որ դալուկ դեմքով երեխաները մեծ բացեն իրենց աչքերը՝ հաճելի զարմանքով:
Ես պատճառ եմ հանդիսանում, որ դժբախտի պրկված ձեռքերը հանգստանան և, այդպիսով, մի վառ կետ եմ նկարում նրա հոգում:
Ես պատճառ եմ հանդիսանում, որ տարեցը վերազտնի իր երիտասարդությունը և ուրախ ծիծաղի, ինչպես հնում:
Ես ռոմանտիկ պատմությունները կենդանի եմ պահում մանկության սրտում և լուսավորում եմ քունը հրաշքներով հյուսված երազներով:
Ես պատճառ եմ հանդիսանում, որ ցանկության ուղերը լի զամբյուղներով հեռանան մութ սանդուղքներով, իրենց ետևում թողնելով աշխարհի բարությամբ ապշահար սրտեր:
Ես պատճառ եմ հանդիսանում, որ անառակը մի պահ կանգ առնի իր զեխ ու շռայլ ճանապարհին և ուղարկում եմ մեծ սիրո մի փոքրիկ խորհրդանիշ, որն առաջ է բերում ուրախության արցունքներ. արցունքներ, որոնք լվանում են վշտի դժվար պահերը:
Ես մտնում եմ մութ բանտախցերը, հիշեցնելով վախեցած մարդկությանը, թե ինչ կարող էր լինել և ցույց տալով լավ օրերը, որոնք դեռ պիտի գան:
Ես մեղմորեն գալիս եմ վշտահար, լուռ, դժգույն տունը, և շուրթերը, որոնք չափազանց թույլ են խոսելու համար, պարզապես լուռ դողում են՝ երախտագիտություն արտահայտելով:
Հազարավոր եղանակներով ես պատճառ եմ հանդիսանում, որ հոգնաբեկ աշխարհը վեր նայի
Աստծուն և մի ակնթարթ մոռանա աննշան ու թշվառ բաները:
Ես Սուրբ Ծննդյան Հոգին եմ:[1]

Թող որ մեզանից յուրաքանչյուրը կրկին վերազտնի Սուրբ Ծննդյան հոգին՝ Քրիստոսի Հոգին:

ՀՂՈՒՄ

1. E. C. Baird, “Christmas Spirit,” in James S. Hewitt, ed., *Illustrations Unlimited* (1988), 81.

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Երբ դուք ընտանիքի հետ կիսվեք Նախագահ Մոնսոնի ուղերձով, կարող եք շեշտել այն հարցը, որը նա տվեց այն բանի վերաբերյալ, թե ինչ նվերներ տերը կցանկանար, որ մենք տայինք Իրեն կամ ուրիշներին այս ժամանակ: Խրախուսեք ընտանիքի անդամներին գրի առնել իրենց մտքերն ու գաղափարները (կամ փոքր երեխաներին՝ նկար նկարել) այն մասին, թե ինչպես «կրկին գտնել Սուրբ Ծննդկան հոգին՝ Քրիստոսի Հոգին»:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Սուրբ Ծննդյան կատարյալ նախօրե

Ջերի Ս. Ջեյքոբս

Երբ ես փոքր էի, ամեն տարվա հիշարժան օրերից էր Սուրբ Ծննդյան նախօրեն: Իմ ընտանիքն ու ես պատրաստում էինք պիցցա, դուրս էինք գալիս և երգում էին Սուրբ Ծննդյան երգերը և հետո հավաքվում էինք Սուրբ Ծննդյան հոգևոր ժամի համար: Մենք չորս ձայնով հիմներ էինք երգում և Սուրբ Ծննդյան օերգեր էինք նվագում մեր երաժշտական գործիքների արտասովոր տեսականիով: Հայրիկը միշտ երեկոն եզրափակում էր Սուրբ Ծննդյան վերաբերյալ մտքով, որը մեզ ուրախության արցունքներ էր պարգևում: Կյանքում Սուրբ Ծննդյան նախօրեից ավելի լավ բան չկար:

Երբ ես մի փոքր մեծացա, մայրս սկսեց հոգ տանել մեր փոքրիկ հարևանուհու՝ Քելլիի համար: Քելլին դպրոցից հետո ամեն օր գալիս էր մեր տուն, մինչ նրա մայրը՝Փեթթին, աշխատանքի էր: Քելլին ամենուր հետևում էր ինձ փոքրիկ շնիկի պես՝աղմկոտ և անօգնական: Ես միշտ սպասում էի այն

պահին, թե երբ Փեթթին պիտի տաներ իր դստերը և իմ տանն ու ընտանիքում խաղաղություն տիրեր:

Մի դեկտեմբեր, երբ մայրս հրավիրեց Փեթթիին և Քելլիին միանալ մեզ Սուրբ Ծննդյան նախօրեին, ես սարսափեցի: *Իմ* Սուրբ Ծննդյան նախօրեն: Մայրս ժպտաց և վստահեցրեց ինձ. «Դա ոչինչ չի փոխի»: Սակայն ես ավելի լավ գիտեի: Նրանք կուտեին մեր ամբողջ պիցցան: Քելլին կծիծաղեր մեր երգելու վրա: Ես մտածում էի, որ դա կլիներ Սուրբ Ծննդյան ամենավատ նախօրեն:

Երեկոյան Փեթթին և Քելլին միացան մեզ. մենք խոսեցինք, ծիծաղեցինք և երգեցինք: Մայրս ճիշտ էր: Ամեն ինչ *իրոք* կատարյալ էր: Կեսգիշերին նրանք շնորհակալություն հայտնեցին մեզ և հեռացան: Ես պառկեցի քնելու՝ լցված սրտով: Ես հասկացա, որ Սուրբ Ծննդյան իսկապես թանկագին նվերները չեն պակասում, երբ կիսվում ես դրանցով: Դրա փոխարեն, դրանք ավելի քաղցր են դառնում և շատանում, երբ տալիս ենք ուրիշներին:

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/11: Թարգմանության հաստատումը. 6/11: *First Presidency Message, December 2012* -ի թարգմանությունը: Armenian 10372 201

Այցելությամբ ուսուցում, փրկարար աշխատանք

Ուսումնասիրեք այս նյութն աղոթքով և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Այցելությամբ ուսուցումը կանանց տալիս է միմյանց հանդեպ ուշադիր լինելու, իրար ամրացնելու և ուսուցանելու հնարավորություն, դա իրոք փրկարար աշխատանք է: Այցելությամբ ուսուցանելու միջոցով քույրերը ծառայում են Փրկչի փոխարեն և օգնում են նախապատրաստել քույրերին հավերժական կյանքի համար:

«Մենք պետք է «զգուշացնենք, մեկնաբանենք, հորդորենք և ուսուցանենք և [ուրիշներին] հրավիրենք գալ Քրիստոսի մոտ» (ՎԿՈՒ 20.59), ինչպես ասել է Տերը իր հայտնության մեջ», - ասել է Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը (1895–1985): Հետո նա ասել է. «Ձեր վկայությունը հոյակապ միջոց է»:[1]

Երբ մենք, որպես այցելող ուսուցիչներ, մեծացնում ենք մեր գիտելիքները ավետարանի ճշմարտությունների վերաբերյալ, մեր վկայությունները ամրացնում և աջակցում են այն քույրերին, ովքեր պատրաստվում են մկրտվել և հաստատվել: Մենք օգնում ենք նոր անդամներին խարիսխ գցել ավետարանի մեջ: Մեր այցելություններն ու սերը օգնում են «ետ վերադարձնել նրանց, ովքեր շեղվել են [և] ջերմացնել նրանց սրտերը, ովքեր սառել են ավետարանի հանդեպ»:[2] Եվ մենք քաջալերում ենք քույրերին գալ դեպի Քրիստոսը տաճար հաճախելու միջոցով:

«Դուք փրկելու եք հոգիներ, - ասել է Նախագահ Քիմբալը այցելող ուսուցիչներին, - և ով կարող է ասել բացի այդ բազում լավ ակտիվ մարդկանցից, ովքեր այսօր ակտիվ են Եկեղեցում, քանի որ դուք եղել եք նրանց տներում և տվել եք նրանց ապագայի հանդեպ նոր ակնկալիքներ, նոր հեռանկար: Դուք բացել եք վարագույրը: Դուք ընդարձակել եք նրանց մտահորիզոնը: . . .

Տեսնում եք, դուք ոչ միայն փրկում եք այս քույրերին, այլ հավանաբար նաև նրանց ամուսիններին և նրանց ընտանիքներին»:[3]

Սուրբ գրություններից

Վարդապետություն և Ուխտեր 20.59, 84.106, 138.56

Մեր պատմությունից

Երբ Մարգարե Ջոզեֆ Սմիթը կազմակերպեց Սփոփող Միությունը, նա ասաց, որ կանայք ոչ միայն պետք է հոգ տանեն աղքատների համար, այլ նաև փրկեն հոգիներ: Նա նաև ուսուցանեց, որ Եկեղեցու կանայք կարևոր դեր են խաղում Երկնային Հոր փրկության ծրագրում:[4] Առաջնորդվելով Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից ուսուցանված սկզբունքներով, մենք՝ որպես Սփոփող Միության քույրեր, կարող ենք աշխատել միասին, որ նախապատրաստենք կանանց և նրանց ընտանիքներին Աստծո ամենամեծ օրհնությունների համար:

«Եկեք կարեկցանք ունենանք իրար հանդեպ, - ասել է Նախագահ Բրիգամ Յանգը (1801–77), և թող [նրանք, ովքեր] ուժեղ են, քնքշորեն օգնեն թույլերին, որ ուժեղանան, և թող նրանք, ովքեր կարողանում են տեսնել, առաջնորդեն կույրերին այնքան ժամանակ, մինչև նրանք կարողանան ինքնուրույն տեսնել»:[5]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Spencer W. Kimball, in *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 116.
2. Eliza R. Snow, in *Daughters in My Kingdom,* 83.
3. Spencer W. Kimball, in *Daughters in My Kingdom,* 117.
4. See Joseph Smith, in *Daughters in My Kingdom,* 171–72.
5. Brigham Young, in *Daughters in My Kingdom,* 107.

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ինչպե՞ս է Սփոփող Միությունը նախապատրաստում ինձ հավերժական կյանքի օրհնությունների համար:

2. Ի՞նչ կարող եմ ես անել, որպեսզի մեծացնեմ նրանց հավատքը, ում համար ես հոգ եմ տանում:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/11: Թարգմանության հաստատումը. 6/11: *Visiting Teaching Message, December 2012* -ի թարգմանությունը: Armenian 10372 201